ՀԱՅԿԱԿԱՆ ՄԻ ՀՆԱԳՈՒՅՆ ԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆ

Ս. Հ. ՈՒԹԱՌՅԱՆ

Մ.թ.ա. III հազարամյակում Կովկասի լեռնային շրջաններից Հայկական լեռնաշխարհի հարավային տարածք իջավ ոչ հնդեվրոպական ծագումով մի ժողովուրդ, որին գիտական աշխարհում տվեցին խուռի անունը։ Իսկ մ. թ. ա. IX—VI դդ. Վանա լճի արևելյան տարածքում խուռիական բարբառը կրող մի ցեղախումբ հիմնադրեց մի նոր հարստություն, որին դիտնականները տվեցին ուրարտացիներ պայմանական անունը[1]։ Մեզ հայտնի չէ, թե եկվոր խուռի-ուրարտացիներն իրենց հետ ի՞նչ մշակույթ և պաշտամունք են բերել և, արդյո՞ք նրանք ընտանիքներով են եկել, թե զուտ զինվորականներ էին։ Բայց ուրարտացի կոչվածները Հայաստանի հարավային տարածքում ստեղծեցին 300-ամյա զինվորական դինաստիա, հենված ստրկատիրական համակարգի վրա։ Որոշ ուսումնասիրողներ այդ ժամանակաշրջանի հայկական տարածքի և մշակույթը, և պաշտամունքը համարել են ուրարտական[2]։ Եթե առաջնորդվենք այդ տրամաբանությամբ, ապա պետք է ընդունենք, որ XIII—XV դդ. ռուսական մշակույթը մոնղոլական էր, որովհետև մոնղոլները 250 տարի տիրեցին Ռուսաստանին։ Այդ նույն տրամաբանությամբ կարելի է ասել, որ ոչ թե մ. թ. ա. IV հազարամյակում Միջագետք մտած սեմական ցեղերն են յուրացրել շումերական հարուստ մշակույթը, այլ ընդհակառակը։ Կամ ոչ թե սելջուկ-թյուրքերն են յուրացրել փոքրասիական և հարակից շրջանների ժողովուրդների մշակույթը, այլ ընդհակառակը։ Պատմությունը ցույց է տվել, որ վերոհիշյալ բոլոր տեղաբնիկները սոցիալ-տնտեսական և մշակութային զարգացմամբ ավելի բարձր աստիճանի վրա էին կանգնած, քան եկվոր քոչվորական, անասնապահական ցեղերը։

Վանի հարստության ուրարտացի հորջորջված ցեղախումբն ապրելով Հայկական լեռնաշխարհի մշակութային, հոգևոր և էթնիկական դրության տեր վաղնջաբնակ հայերի մեջ, հայկական դիցաբանից անխուսափելիորեն կատարել է փոխառություններ, այլապես մ. թ. ա. IX դ. Մինուա թագավորը Վանի «Մհերի դռան» արձանագրության դիցացուցակի մեջ չէր գրի՝ «և ուրիշ լեզուների աստվածներ»[3]։ Օրինակ, ուրարտական արևի Շիվինի աստծու անունը փոխ է առնված խեթական Siuna արևի աստծու անունից[4]։ Այստեղ մեր նպատակն է խոսել միայն Կուվերա աստվածության մասին։ Վանի ժայռի վրա սեպագրված դիցացուցակում նշված է, որ Quera աստվածությանը զոհաբերել են մեկ եզ և երկու ոչխար։ Նրա անունը հիշատակվել է նաև Վանի մոտ գտնվող Զովաստան գյուղի և Մեծոփաց Վանքի արձանագրություններում[5]։ Ընդհանրապես արձանագրություններում չեն հիշատակվել աստվածների պաշտոնները։ Կուերան, կարծում ենք, ունեցել է բերքատվության պաշտոն, որովհետև նմանատեսակ աստվածներ գոյություն են ունեցել հնդեվրոպական մի քանի ժողովուրդների մեջ։ Հոմեական բեր-

---

1 Гамкрелидзе, Вяч. Вс. Иванов, Индоевропейский язык и индоевропейцы, Тбилиси, 1984, с. Lji.

2 Б. Б. Пиотровский, Искусство Урарту, Л., 1962; Г. А. Меликишвили, Урартские клинообразные надписи, М., 1960.

3 Г. А. Меликишвили, *նշվ. աշխ.*, էջ 143—148:

4 *Նույն տեղում, էջ 145։*

5 *Նույն տեղում, էջ 174։*

բաավության նույնանուն աստված էր Quirinus-ը, որին նվիրված տոնը կապված էր հացահատիկը բովելու արարողության հետ, և որին զոհաբերել են մեկ ոչխար[6]։ Ըստ Ժ. Դյումեզիլի *CO-Uirino նշանակել է «առատություն» կամ «հարստություն»[7]։ Ս. Նևելևան ենթադրել է, որ Quirinus աստծուն Ապենինյան թերակղզում պաշտել են նախքան իտալիկների բնակեցումը Հռոմում[8]։ Իսկ Ա. Չերտկովն այն կարծիքն է հայտնել, որ պելասգոթրակական ցեղերը՝ իտալացիների նախնիները, Փոքր Ասիայից Իտալիա են տեղափոխվել մ. թ. ա. III հազարամյակի կեսերին[9]։

Խնդրո առարկայի մասին Թ. Գամքրելիձեն և Վ. Իվանովը այն կարծիքն են հայտնել, որ հռոմեական Quirinus և հին իսլանդական Freir աստվածությունները ներկայացրել են տնտեսության տարբեր ճյուղերի հովանավորներ, որոնք ձևավորվել են հնդեվրոպական նախալեզուն կրող ժողովրդի քայքայման ժամանակ։ Գուցե այդ էր հիմնական պատճառը, որ արդեն ըստ բարբառների բաժանված ժողովուրդներն ունեցել են բերքատվության տարբեր անուններով աստվածներ, ուստի հնարավոր չէ դրանց համահնդեվրոպական մի նախաձև գտնել[10]։

Մեր կարծիքով հնդկական դիցաբանության մեջ Կուվերա անունը տառադարձվել է Կուբերա, որին անվանել են նաև Վիշրավանա, այսինքն՝ «հաքստության որդի»[11]։ Ս. Նևելևան նշել է, որ այդ աստվածության ծագումն անհայտ է, բայց նրա հետքերը տանում են հնդկական բանահյուսության ակունքները։ Ըստ Ռամայի դիցաբանական պատմության՝ «Կուբերայի այգին» գտնվում էր Հիմալայի լեռներից մեկի՝ Գանդհամադանի վրա, որտեղ Կուբերան, «մարդու հետ սլանում է իր սայլով»[12]։ Հնդկական առասպելաբանությունը վկայում է, որ Կուբերան հովանավորել է այգեգործությունը։ Ինչպես հնդկական այդ աստվածությունը, այնպես էլ հռոմեական բերքատվության հովանավորներ՝ Յուպիտերը, Մարսը և Քուիրինուսը Կապիտոլիում են սլանում մարտական կառքով[13], իսկ փոյուգիական պտղաբերության հովանավոր Կիբելան լեռներում շրջում է առյուծներ և հովազներ լծած[14]։ Պատմությանը հայտնի է, որ անիվի գյուտը տեղի է ունեցել Առաջավոր Ասիայում[15]։ Հիրավի, առասպելական կառքով աստվածների շրջելը կապված էր հնդեվրոպական ժողովուրդների տեղաշարժերի պատմության հետ, որն էլ արտացոլվել է բանահյուսության և դիցաբանության մեջ։

Հռոմեական Quirinus աստվածանունը քննելիս գիտնականները նկատի են ունեցել միայն նրա viri «մարդ» բաղադրիչը, որը Ավեստայում հորջորջվել է vira ձևով, նշանակելով «մարդ», լատիներեն՝ vir («այր»), գոթերեն՝ wair («մարդ»), թոխարերեն Ա լեզվում՝ vir («երիտասարդ»), հին իսլանդերեն Fer («տղամարդ»), որոնք ծագում են հնդեվրոպական *Uīr-, *Uīro արմատական բառից, և նշանակել են «աստվածների ու մարդկանց միասնություն»[16]։ Իսկ հնդկերենում vira («մարդ») և pasu («կենդանիներ») բառակազմությունը տվել է virapsa՝ և նշանակել է «մարդկանց և կենդանի-

---

6 Ж. Дюмезиль, Верховные боги индоевропейцев, М., 1983, с. 112.

7 Նույն տեղում։

8 С. А. Невелева, Мифология древнеиндийского эпоса, М., 1974, с. 125.

9 А. Д. Чертков, Пеласго-фракнйские племена, населявшие Италию и оттуда пришедшие в Ретию, кн. 13, М., 1853, с. 98.

10 Т. В. Гамкрелидзе, Вяч. Вс. Иванов, նշվ. աշխ., էջ 793, 798, 851:

11 С. А. Невелева, նշվ. աշխ., էջ 67, 215:

12 Նույն տեղում, էջ 79։

13 Ж. Дюмезиль, նշվ. աշխ., էջ 115:

14 М. Н. Ботвинник, и другие, Мифологический словарь, М., 1985, с. 74,

15 Т. В. Гамкрелидзе, Вяч. Вс. Иванов, նշվ. աշխ., էջ 867, 870, 884, 894.

16 Նույն տեղում, էջ 470։

ների միասնություն»[17]։ Վեդայական virapsa՛-ն, իրանական (Ավեստայում): pasəuš Virāt-Ča-ն և ումբրերեն v(e)iro peqā՛-ն նույն իմաստն են ունեցել[18]։ Հռոմեական ծիսակարգում նրանց միասնությունն արտահայտել է. մարդ-ձի-կով, իսկ հնդկականում՝ մարդ-ձի-եզ-ոչխար ձևով, որպես. զոհաբերվող կենդանիներ[19]։

Մեր կարծիքով այստեղ խոսքը ոչ միայն զոհաբերվող կենդանիների մասին է, այլև ներկայացված է հնդեվրոպական ժողովուրդների կեցության տոհմային բնույթը դեռ նախահայրենիքում գտնված ժամանակ։ Հույն պատմիչ Քսենոփոնը (մ. թ. ա. 430—355 թթ.) նկարագրել է Հայաստանի դեռևնափոր տները, որտեղ մարդիկ և կենդանիներն ապրել են միասին[20]։ Քսենոփոնի նկարագրածից ելնելով Ն. Ադոնցը եզրակացրել է, որ «Հայաստանի գյուղը, իրեն բնորոշ պատնեշներով, որտեղ մարդկանց հետ տեղավորված էին անասունները... բոլորը պատկանում են ոչ այլ, քան միայն տոհմային կացութաձևին»[21]։ Մարդկանց և անասունների միասին ապրելու հնդեվրոպացի նախնիների հին սովորությունը նույնությամբ մնացել է հայերի մեջ։

Մեր կարծիքով հայերենում պահպանված վիրապը և հնդ-արիական virapsa՛-ն նույն նշանակությունն են ունեցել։ Սակայն հայերենում վիրապ կամ խորվիրապ ասելով հասկացվել է «գետնափոր սենյակ» կամ «զընդան»[22]։ Այդ բացատրությունն ուշ ժամանակի է, երբ քրիստոնեություն ընդունելուց հետո Հայաստանում արհամարհական վերաբերմունք կար հեթանոսական սովորությունների նկատմամբ, վիրապը բացատրելով «ի գրի անգիտութեան կապեալ կայիք, ի կռապաշտութեան վիրապի»[23]։ Այս բոլորից եզրակացնում ենք, որ «վիրապ» բառը նախնական իմաստով նշանակել է «մարդկանց և կենդանիների միասնություն», ինչպիսի դրություն նկարագրել է հույն պատմիչն իր ժամանակի Հայաստանում։ Ուստի «վիրապ» բառը virapsa՛-ի հայերեն զուգահեռն է։

Անդրադառնալով Quirinus դիցանվան ծագման հարցերին, ինչպես ասացինք, որոշ գիտնականներ (Ժ. Դյումեզիլ, Ս. Նևելևա, Պ. Գրինցեր) հաշվի են առել սոսկ դիցանվան *viri բաղադրիչի նշանակությունը, իսկ CO անվանակազմիչ մասնիկի մասին ոչինչ չեն ասել։ Մեր կարծիքով հնդեվրոպական ժողովուրդների տնտեսության տարբեր ճյուղերի հովանավորի անունը պետք է որ կազմված լինի *Kᵘo («հող») և *U͡Iro («մարդ») բառակազմությունից, տալով Kᵘouirino, այսինքն՝ «հողի մարդ», փոխաբերական իմաստով՝ «հողագործ»։ Այդ տերմինից է հռոմեական couirino ապա Quirinus դիցանունը, իսկ հայերենում հավանաբար Կուվիրա, որն ուրարտական պանթեոն է փոխանցվել Quera անունով։ Հունաստանում բերքատվության հնագույն աստվածություններ են համարվել կավիրները կամ կաբիրները[24]։ Գիտնականների կարծիքով դրանց պաշտամունքը Հունաստան է մտել արևելքից, այսինքն՝ Փոքր Ասիայից։ Դրանք պաշտվել են Սամոթրակե, Իբոս և Լեմնոս կղզիներում, ապա պաշտամունքն անցել է Հռոմաստան[25]։ Հունական կավիրներ > կաբիրներ նույնանվան v>b հնչյունափոխությունն այն օրինաչափությունն է ունեցել, ինչ որ հնդկականում՝ Qouiria >Qubera:

---

17 Նույն տեղում։

18 Նույն տեղում, էջ 470։

19 Նույն տեղում, էջ 469, 481։

20 Քսենոփոն, Անաբասիս, Երևան, 1970, էջ 97։

21 Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, Ереван, 1971, с. 390—391.

22 Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հ. IV, Երևան, 1980, էջ 417։

23 Նոր բառգիրք Հայկազեան լեզուի, հ. 2, Երևան, 1981, էջ 104։

24 М. Н. Ботвинник и другие, Նշվ. աշխ., էջ 47:

25 Նույն տեղում, էջ 68—69։

Պետք է ասել, որ հնդեվրոպական նախալեզվում *KᵘO («հող») արմատական բառը չի եղել, որ viri («մարդ») բաղադրիչի հետ տար վերոհիշյալ դիցանունները։ Հետևապես համոզված ենք, որ մ. թ. ա. IV—III հազարամյակներում, շումերական և հնդեվրոպական ժողովուրդների հարևանության պայմաններում (Վանա լճի հարավային տարածքում), հնդեվրոպական բարբառները ձևավորվելու ժամանակաշրջանում *KᵘO («հող») բառը փոխ է առնվել շումերերենից։ Ինչպես հայտնի է, Միջագետքում հնագույն շումերներն ունեցել են ժամանակի հողամշակության, հացաբույսերի մշակման բարձր մշակույթ[26]։ Շումերական հողի կամ երկրի դիցուհու անունը սեպագիր արձանագրություններում դաղափարագրվել է Ki[27], իսկ նրա ուրարտերեն հնչյունական ընթերցումը gi(u)ra է՝ «հող»[28]։ Ուրարտական արձանագրությունների մեջ բազմիցս հիշատակվող giura նշանակել է «հող»[29], իսկ հողագործների կամ բերքատվության աստծու անունը՝ Quera[30]։ Շումերական «հող» նշանակող բառի փոխառությունը սանսկրիտերենում KO («հող») է[31], իսկ հունարենում տառադարձվել է gē («հող»), որից արդի գիտության մեջ առաջացել են հողի հետ կապված բազմաթիվ տերմիններ[32]։ Հունարենում նույն հիմքից է անվանակազմվել երկիրն անձնավորող դիցուհու Գեա անունը, որին հունական դիցաբանության մեջ պատկերել են մինչև մարմնի կեսը հողի մեջ[33]։ Խոսելով հունական աստվածների ծագման մասին, Սոկրատեսը հայտնում է. «Այս հարցում ես իմ կասկածներն ունեմ։ Մտածում եմ, որ հելլենները շատ անուններ են փոխառել բարբարոսներից»[34]։ Անդրադառնալով հունական աստվածների էությանը, Հեգելը նույնպես հաստատում է, որ բնության ուժերը մարմնավորող հունական հնագույն աստվածներն ասիական ծագում ունեն[35]։

*QO-viro («հողի մարդիկ») հասկացողությունից է առաջացել հռոմեացիների գյուղական համայնքի բերքատվության դիցուհու Quirinus անունը[36]։ GO հիմքից է նաև լատիներեն Golo բառը, որը նշանակել է «հողը մշակել, վարել»[37]։ Այսպիսով, լատիներեն GO, սանսկրիտերեն՝ KO և հունարեն gē («հող») բառերը ծագում են հնդեվրոպական ժողովուրդների միասնության ժամանակ շումերերենից փոխառված, բայց հնդեվրոպական *KᵘO («հող») տառադարձությամբ արմատական բառից։

Ի. Ջավախիշվիլին գրում է, որ վրացական ցեղերի մեջ գոյություն է ունեցել բերքատվության Կվիրիա անունով մի աստվածություն։ Իր այդ անունը կարող է առաջացած լինել «կիրակի օր» կամ Հունաստանում տարածված «աստված» բառից, կամ էլ՝ կավիրներ աստվածությունների անունից[38]։ Մեր նպատակից դուրս է անդրադառնալ հեղինակի ճիշտ կամ սխալ եզրահանգումներին, բայց պարզ է, որ Կվիրիայի պաշտամունքը Վրաստան է

---

26 Д. Г. Редер, Мифы и легенды древнего Двуречья. М., 1965, с. 31—34; Н. Т. Канева, Шумерский героический эпос (Вестник древней истории, 1964, № 3, с. 249).

27 Д. Г. Редер, նշվ. աշխ., էջ 117:

28 Г. А. Меликишвили, նշվ. աշխ., էջ 38, 374, 404:

29 Նույն տեղում, էջ 126, 128, 262, 344։

30 Նույն տեղում, էջ 437։

31 Նոր բառգիրք Հայկազեան լեզուի, հ. 2, էջ 116։

32 Сельскохозяйственная энциклопедия, т. I, М., 1968, с. 1047, 1982.

33 М. Н. Ботвинник и др., նշվ. աշխ., էջ 47:

34 Платон, Сочинения в трех томах, т. I, М., 1968, с. 450—451.

35 Г. Гегель, Эстетика, т. V, М., 1973, с. 246—347.

36 Ж. Дюмезиль, նշվ. աշխ., էջ 132—133:

37 Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 3, Երևան, 1931, էջ 393։

38 Ջ. Ճումբուրիձե, Ինչ է քո անունը, Թբիլիսի, 1971, էջ 81 (վրացերեն)։

մտել այն ժամանակ, երբ հելլենները, Հոմերոսից շատ առաջ «գաղութացրին» Սև ծովի հարավարևելյան ափամերձ տարածքը՝ Կոլխիդան։

Այս բոլորից գալիս ենք այն համոզման, որ հնդեվրոպական ժողովուրդների նախահայրենիքում բերքատվության աստվածությունը ձևավորվել է մ. թ. ա. IV—III հազարամյակում, այն ժամանակ, երբ դեռ կովկասյան լեզվաճյուղին պատկանող խուռի-ուրարտացիները չէին հայտնվել Վանա լճից հարավ ընկած լեռնագոտում և նրա արևելյան շրջանում։ Հետևապես, Վանի ժայռի արձանագրության (մ. թ. ա. IX դ.) մեջ հիշատակած Quera աստվածությունն «ուրարտացի» եկվորները փոխ են առել տեղաբնակ հայերից։ Ուրիշ աղբյուրներից անհնար էր դրա փոխառությունը, որովհետև իտալական ցեղերը իրենց նախահայրենիքից այն Հռոմ էին տարել Կուիրինուս անունով, հունական ցեղերը Միջերկրականի կղզիներն էին տարել կավիրներ>կաբիրներ անուններով, իսկ հնդ-արիացիներն իրենց նոր հայրենիքում այն անվանել են Կուբերա։

Բերքատվության Կուվերա աստվածության ավելի տարածված պաշտամունքի նախնական գործառնությունից պետք է համարել guel («եղել», «միշտ լինել») բազմաբովանդակ տերմինը[39]։ Քանի որ հնդեվրոպական Kᵘ հնչյունը հունարենում տալիս է π, ուստի guel>πολεῖν նշանակել է «արորով հողը շուռ տալ, եղել»։ Հայերենում այդ բառի gu հնչյունի սղումով ստացվել է el, որն էլ իր հերթին լ>ղ հնչյունափոխությամբ տվել է «եղ» (առանձին անգործածական)։ Որոշ բառեր հնդեվրոպականից հայերենին անցնելիս սղվում է g հնչյունը, ինչպես *glek>լեսուլ, *qrop>որովայն[40]։ «Եղ» հիմքը հայերենում ածանցների հետ տվել է առարկայական անուններ և որոշ հասկացողություններ, ինչպես «ան» ածանցով՝ եղան (հոսելի), որը կալի աշանը շրջելու կամ խոտ տեղափոխելու գործիք է։ Հայերենում եղել նաև նշանակել է «հողը արորով շրջել արևի դեմ, որպեսզի լավ այրվի և զորանա»[41]։ Մուշի բարբառում «եղել» հնում նշանակել է «Զհերկերն նոյնպէս վաստակել, եղել և սրբել յամենայն ազգ խոտաց»[42]։

Հնդեվրոպական ժողովուրդների տեղաշարժերից հետո աշխարհագրական նոր պայմաններում երկրագործության տարբեր ճյուղերի հովանավոր նոր աստվածները շատ են եղել[43]։ Բազմաստվածական պաշտամունք են ունեցել նաև հայերը, որոնց մեջ հարգի էին բերքատվության դիցուհի Անահիտը և Կուվերան։ Վերջինիս անունով մի քանի տեղանուններ կային Պատմական Հայաստանի տարածքում։ Ըստ սեպագիր արձանագրությունների, Արծվաբերդի շրջանում (Վանա լճից հյուսիս) կար Queraînili անունով գյուղ, իսկ Արածանի գետի ձախ ափին՝ Queraitaše ամրոց-քաղաք[44]։

Հայոց դիցարանում բերքատվության Կուվերա աստվածության «մոռացության» հիմնական պատճառն Անահիտ դիցուհին էր, որն ուներ բազմաթիվ պաշտոններ։ Հայաստանում տոհմացեղային հասարակությունից սկսած մինչև քրիստոնեության սկզբնավորումը Անահիտ դիցուհին եղել է երկնային ջրերի՝ անձրևների հովանավորը[45]։ Տիգրան Մեծի դրամների վրա որոշմել էին դիցուհու կերպարը՝ ձեռքին արմավենու ճյուղ, իսկ ոտքերի տակ՝ ջրի աստվածության անձնավորումը[46]։ Անահիտը հայոց մեջ եղել է բժշկության հովանավոր[47], սիրո և պտղաբերության դիցուհի[48], որին զոհաբերում էին առա-

39 Т. В. Гамкрелидзе, Вяч. Вс. Иванов, նշվ. աշխ., էջ 659, 718, 720.

40 Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 3, էջ 394։

41 Գիրք Վաստակաց, Վիեննա, 1877, էջ 35։

42 Նշվ. աշխ., էջ 23, 54, 66—69։

43 Г. А. Меликишвили, նշվ. աշխ., էջ 174:

44 Նույն տեղում, էջ 307։

45 Անանիա Շիրակացի, Տիեզերագիտություն և տոմար, Երևան, 1940, էջ 92։

46 Հայ ժողովրդի պատմություն, հ. I, Երևան, 1971, էջ 696։

47 Հայ ժողովրդի պատմություն, հ. II, Երևան, 1984, էջ 552։

48 Կ. Մելիք-Փաշայան, Անահիտ դիցուհու պաշտամունքը, Երևան, 1963։

ջին բերքի՝ ցորենի և գարու հասկերը և նրա արձանը պատում դալար շիվերով ու պսակներով[49]։ Դիցուհին այդքան պաշտոններ վերցնելով հայոց պանթեոնում՝ մոռացության տվեց Կուվերային։ Անահիտը նման դեր է ունեցել նաև պարսկական դիցաբանության մեջ։ Սասանյան հարստության ժամանակ Ադիաբենում, բաբելական Իշտար և Նանա դիցուհիները նույնացվեցին Անահիտի հետ և կորցրեցին իրենց ինքնուրույնությունը[50]։

ДРЕВНЕЙШЕЕ АРМЯНСКОЕ БОЖЕСТВО

С. О. УМАРЯН

Резюме

В 5—4 тысячелетии индоевропейский праязык расщепился, образовав родственные языки. Новые племена были соседями шумеров и семитских племен Междуречья. В этих условиях были неизбежны заимствования, каковым является слово *Kᵘ̯O «земля», которое в шумерских клинописях выражено идиограммой *Ki. Этот корень сохранился в нескольких и.-е. языках—в санскрите KO, в латыни GO, в греческом gē. Заимствованный корень Kᵘ̯O и и.-е. словообразование *u̯Iro (человек) дали термин Kᵘ̯ouIrino «земледелец», а также наименование божества урожайности. Римляне называли его Quirinus, индекс Kubera, а армяне, по-видимому, Կուվեր։ Когда неиндоевропейцы хурри-урартийцы в середине 3-его тысячелетия с Кавказа переселились на Армянское нагорье, уже многие и.-е. народы покинули свою прародину. В этот период на Армянском нагорье хозяевами положения в смысле языковом, культурном и вообще духовном были армяне. Следовательно, упомянутое в ванской клинописи божество Quera было заимствовано пришельцами из армянского пантеона.

---

49 Հայ ժողովրդի պատմություն, հ. I, էջ 227, 695։

50 Հ. Գ. Մելքոնյան, Ադիաբենի պետությունը և Հայաստանը, Երևան, 1980, էջ 68—91։